



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՂԵՐՆՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Նոյեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Նոյեմբերի առաջին փասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 3-5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝ +22...+24°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +16...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+22°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+24°C, Շիրակում՝ +16...+20°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +15...+19°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Գեղարքունիքում՝ +15...+18°C, Լոռիում՝ +22...+24°C, Արմավիրում՝ +22...+24°C, Արարատում՝ +21...+23°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +15...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C (Աշտարակ՝ +23°C):


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝ +3...+5°C (Դիլիջան՝ -1°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+4°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +5...+8°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+3°C (Սիսիան՝ -4°C) Շիրակում՝ -2...-7°C (Արթիկ՝ -1°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -4...+1°C, նախալեռնային շրջաններում՝ +2...+4°C, Գեղարքունիքում՝ -2...-6°C (Շորժի, Սևան՝ 0°C), Լոռիում՝ -4...-6°C (Օձուն՝ +1°C), Արմավիրում՝ 0...+2°C, Արարատում՝ +2...+5°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -3...-5°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C:

Տասնօրյակային տեղումներ



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 1-6մմ (10-49%) Լոռիում՝ 0.2-2մմ (2-16%), Տավուշում՝ 0.2-0.4մմ (2-3%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 1մմ (8%), նախալեռներում՝ 0.4-1մմ (3-11%), Գեղարքունիքում՝ 0.4-1մմ (2-9%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0.3-1մմ (1-5%), նախալեռներում՝ 1մմ (8%), Արմավիրում՝ 0.5-1մմ (8-11%), Արարատում՝ 1-2մմ (10-14%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 2մմ (8%), նախալեռներում՝ 4մմ (36%), Սյունիքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Նոյեմբերի առաջին տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում գրանցվել են -5...-10°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում՝ -3...+1°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +6°C:



Գյուղատնտեսական մշակաբույսեր

Հանրապետությունում ամենուրեք աշնանացան ցորենի վեգետացիան շարունակվել է:

Առանձին լեռնային շրջաններում (Սիսիան, Մասրիկ, Ֆանտան) աշնանացանը թփակալել է, մնացած շրջաններում առաջացել են հանգուցային արմատները, հովտային շրջաններում՝ երրորդ տերևը:

Մերձավանում աշնանացանի դաշտում հողի արդյունավետ խոնավության պաշարները 0-10սմ-ում կազմել են 19մմ, 0-20սմ շերտում՝ 43մմ, 0-30սմ՝ 74մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 5-12մմ-ով:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 8-18սմ:

:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ

